



ԻՆՉ Է ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՏՈՒՄԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուղևորության մեկնելիս կարող են ի հայտ գալ թոփաքը կամ կացարանի ամրագրումը չեղարկելու կամ ժամկետները փոփոխելու հանգամանքներ՝ Ձեզ համար առաջացնելով չնախատեսված ծախսեր: ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ-ն առաջարկում է խուսափել այդ ծախսերից՝ ձեռք բերելով Ուղևորության ընդհատումից պահովագրություն:

Ունենալով Ուղևորության ընդհատումից պահովագրություն՝ ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ-ը կփոխհատուցի Ձեր ուղևորության ծախսերը, եթե այն չեղարկվել կամ ընդհատվել է հարգելի պատճառներով:

ԻՆՉ ՈՒՍԿԵՐԻՑ ԵՎ ԻՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԵՔ ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ

ՈՒՍԿԵՐ (ՊԱՏԱՀԱՐՆԵՐ)		<ul style="list-style-type: none"> ✓ Ուղևորության չեղարկում, ✓ Ուղևորության ժամկետի փոփոխում, ✓ Ուղևորության ընդհատում, որոնք հետևանք են՝ <ol style="list-style-type: none"> 1. Ձեր կամ Ձեր ընտանիքի անդամի առողջական խնդիրների, մահվան 2. Ձեզ պատկանող գույքի վնասման, կորստի 3. Ձեր՝ դատական գործընթացում ներգրավվածության 4. Ձեր՝ զինված ուժեր գորակոչվելու 	
		Տարբերակ 1	Տարբերակ 2
ՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ՝ ըստ փաթեթի	Փաթեթ	ՍՎԻԿԱՏՈՒՄԻ ԱՐԺԵՔԻ	ՍՎԻԿԱՏՈՒՄԻ ԱՐԺԵՔԻ
	ՍՏԱՆԴԱՐՏ	100%-ը	85%-ը
	ԿՈՍՊՈԼԵՔՍ	ՍՎԻԿԱՏՈՒՄԻ ԱՐԺԵՔԻ և կացարանի ամրագրման չվերադարձվող արժեքի 100%-ը	ՍՎԻԿԱՏՈՒՄԻ ԱՐԺԵՔԻ և կացարանի ամրագրման չվերադարձվող արժեքի 85%-ը
ՍԱԿԱԳԻՆ		Հատուցվող գումարի 6,5 %	Հատուցվող գումարի 4 %

ԻՆՉՊԵՍ Է ԿՆՔՎՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ուղևորության ընդհատումից պահովագրության պայմանագիրը *կնքվում է* սվիստումսի գնման օրը՝ նախատեսվող թոփաքից առվազն 1 (մեկ) շաբաթ առաջ:

Ուղևորության յուրաքանչյուր թոփաքի (ուղղության) համար կնքվում է 1 (մեկ) պահովագրության պայմանագիր:

ԻՆՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼԻՄ

- ✓ անձը հաստատող փաստաթուղթ
- ✓ սվիստումսի տվյալներ (արժեք, մեկնման երկրներ և ժամկետներ)
- ✓ կացարանի ամրագրման տվյալներ (արժեք, ժամկետներ, չվերադարձվող գումար)



ԵՐԲ Է ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՄԿՄՎՈՒՄ ԵՎ ԱՎԱՐՏՎՈՒՄ

Ապահովագրության պայմանագրի գործողությունը *սկսվում է* ավիատոմսի գնման օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից և *ավարտվում է* մինչև յուրաքանչյուր թռիչքի (ընդհատումներով թռիչքի դեպքում/пересадка/ դրա վերջին մասի) մեկնման ժամը:

ՈՐՈՆՔ ԵՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԶԵՂԱՐԿՄԱՆ /ԸՆԴՀԱՏՄԱՆ ՀԱՐԳԵԼԻ ՊԱՏՃԱՆՆԵՐԸ

- 1. Ձեր կամ Ձեր ընտանիքի անդամի առողջական խնդիրները կամ մահը**
 Ձեր կամ Ձեր ընտանիքի անդամի (կին/ամուսին, զավակ, ծնող, տատ, պապ, քույր, եղբայր, քրոջ/եղբոր կին/ամուսին և զավակ) ստացիոնար բուժման անհրաժեշտությունը (հոսպիտալացումը), առողջության հետ կապված անհետաձգելի խնդիրները, մահը:
- 2. Ձեզ պատկանող գույքի վնասումը կամ կորուստը**
 Ձեզ պատկանող անշարժ գույքի և (կամ) տրանսպորտային միջոցի վնասումը կամ կորուստը (ոչնչացումը), որը տեղի է ունեցել՝
 - ✓ հրդեհի հետևանքով,
 - ✓ ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման համակարգերի ջրերի արտահոսքի հետևանքով,
 - ✓ երրորդ անձանց կողմից, պայմանով, որ պատճառի հետաքննությունը և հետևանքների վերացումը կատարվել են պայմանագրի գործողության ընթացքում
 - ✓ Տարերային աղետների (երկրաշարժ, սողանք, կարկուտ, ջրհեղեղ կամ տեղատարափ անձրև, փոթորիկ կամ ուժեղ քամի) հետևանքով:
- 3. Ձեր՝ դատական գործընթացում ներգրավվածությունը**
 Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում Ձեր՝ դատական գործընթացում ներգրավված լինելը (որպես վկա, փորձագետ, մասնագետ, թարգմանիչ):
- 4. Ձեր՝ զինված ուժեր գորակոչվելը**
 Ձեր՝ զինված ուժեր գորակոչվելը (գորավարժությունների մասնակցելը), եթե Դուք այդ մասին ծանուցումը ստացել եք Ապահովագրության պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո:

ԻՆՉ ԱՆԵԼ, ԵԹԵ Ի ՀԱՅՏ Է ԵԿԵԼ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆԸ ԽՈՉԼՆԴՈՏՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Եթե առաջացել են Ձեր պլանավորված ճանապարհորդությունը չեղարկելու պատճառներ կամ Ձեր ուղևորությունն ընդհատվել է, ապա անհրաժեշտ է **առաջին իսկ հնարավորության դեպքում** այդ մասին հայտնել ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ-ին՝ զանգահարելով շուրջօրյա գործող **098 277 277** հեռախոսահամարով: Մեր մասնագետները կտրամադրեն համապատասխան խորհրդատվություն Ձեր հետագա գործողությունների վերաբերյալ:

* Ապահովագրության վերաբերյալ մանրամասները ներառված են Ուղևորության ընդհատումից ապահովագրության պայմաններում և Պայմանագրում: